

անկիւններէն մէկը բաւական խորու-
թեամբ փոս մը փորէ , և վախճանելէս
երկու օր վերջը հոն ամփոփէ զիս : Վառն
սրտոտ ես , նայէ որ այն յիմար և աւե-
լորդապաշտ վախը , որ մեռելոց վրայ
կ'ունենան տկարամիտները , մտքէդ հա-
նես . մտածէ որ լստուած երկինքէն
վրադ կը հսկէ , թէ որ ասոր վրայ ապա-
հով ես , ինչ բանէ կը վախնաս :

Սաստիկ նեղութենէս խռոված տակ
նուվրայ եղայ . քանի որ կը մտածէի ,
որ պապս պիտի կորսնցընեմ , և թէ որ-
չափ ատեն ալ արդեօք միս մինակ այն
մութ բանտին մէջ պիտի մնամ՝ չէի
կրնար հանդարտիլ : Բայց բարի ծերուն
օրերը համբուած էին , իրեն երկար ըն-
թացիցը վախճանը հասած էր . . .
ես միայն մնացի . . .

Նշեցելոյն վրայ իմ սգալից պարտ-
քերս կատարելէն ետքը , և ամենայն
կերպով յարմարեցնելով զիս ինծի
տուած խրատուցը , վճատութեան և
լքման մէջ ինկայ . անյաղթելի տրտմու-
թիւն մը կը զգայի ներսս , որ զիս տակն
ուվրայ կ'ընէր , և չէի կրնար երեւա-
կայական վախերուն յաղթել՝ որ կամաց
կամաց առանց ուղեւորս առջևս կու
գային : Սկիզբները անանկ եղայ որ ին-
չուան զօրութիւն և սիրտ չմնաց վրաս
զիս մէյմը առ աղբիւրն ամենայն միսի-
թարութեանց դարձնելու : Բայց վեր
ջապէս գթացաւ լստուած իմ վիճակիս
վրայ . ես ինծի եկայ , աղօթք ըրի , և
զօրանալ զգացի :

Վանի մը օրուրնէ 'ի վեր իմացեր
էի որ օդը աւելի կակղացեր է , և կրակի
շատ հարկաւորութիւն չէի իմանար :
Լստօր ցորեկուրնէ երկու ժամ վերջը ,
խուլ մռնչիւն մը լսեցի , նման՝ հեռու և
խոր որոտման շառաչմանը . քանի որ
մօտեցաւ սարսափելի դարձաւ , սաստիկ
փոթորկով հանդերձ : Սխալէս սկսայ
պոռալ , շատ կահ կարասիքը գետին
գլորեցան . և սարսափելի փոշի մը հիւ-
ղին խոհակերոցը բռնեց , կը տեսնէի
հիւղին սաստիկ ցնցմունքը : Բայց 'ի
վերայ այսր իմ հարկաւոր բաներս լաւ
վիճակի մէջ էին : Լն ատեն մէյմը այ-

ցելութեան եղայ իմ միայնարանիս ա-
մէն կողմը . երբ ախուր մտայ , հոն
այս դէպքին վախնալու հետքերը տե-
սայ : Վետինը բեկորներով ծածկուած
էր , պատը տեղ տուած , և քիչ մ'ալ վար
ծուած , բայց դեռ ոտքի վրայ էր , տա-
նիքին լերան կողմի մէկ կտորը ջար-
դուեր էր : Վաշտեցի որ ձեան մեծ
հիւս մը , երկայն բարակ գլորելով ե-
կած հիւղին կռնակը կը թնած պիտի
ըլլայ :

(ԳԻՏԻ ՀԵՐՈՒՆԵՅՈՒՆ)

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՍԿԶԲՈՒՆՔ ԲՆԱԿՈՒԾՈՒԹԵԱՆ

Գաւ ժՁ . Բնադաճական անուանակոչութեան
վրայ :

Գաւալ յարմարէ :

Դ . Լսոնց մէջ առջիններն կը սե-
պուին երկու նոյնաթթու և տարարմատ
աղերէ ձևացած մարմինները , որոնք
Կրիւալ աղ՝ կ'ըսուին . զոր օրինակ յը-
ծմբուտ պաղլեղին և յածմբուտ պոտա-
սին միաւորելով կ'ըլլայ՝ Կրիւալ ծծմբուտ
պաղլեղի և պոտասի՝ ըստուած աղը . ո-
րուն անուանակոչութիւնն ալ ինչպէս
որ կ'երևայ շատ պարզ է : — Լսոնց մէջ
կը սեպուին անոնք՝ որ այլ և այլ արմատ
ներու մի և նոյն թթուին հետ միաւո-
րեցնէ կը բաղկանան ու երբեք ալ կ'ը-
սուին . զոր օրինակ երբեք ծծմբուտ
պաղլեղի , պոտասի և աւալի :

Ե . Բաւական մարմնոց մէջ կը սեպուին
անոնք՝ որ երկու տարասեռ երկակնե-
րէ կը բաղկանան . ինչպէս երբ մե-
տաղի հետ միաւորած մետաղատիպ
մարմին մը , նոյն մետաղին թթուածնե-
լոյն հետ նորէն միանայ . զոր օրինակ
Նարրոյ ծծմբուտը՝ Նարրոյ թթուի .

1 Գղ . Sel double.

2 Գղ . Sulfate double d'alumine et de potasse.

3 Գղ . Sulfate triple d'alumine, de potasse et
d'ammoniaque.

կին հետ, կի՞մ Միգկի քլորաւորը՝ Սընդ-
ի թթուիկին հետ. ան ատեն ասոնց
մերժական տարերքը իրարու հետ կը
բարդին ու մարմնոյն սեռական անուռը
կը կազմեն, իսկ մետաղ մարմինը կամ
դրական տարրը՝ ետեւէն կը դրուի տե-
սակարար անուան տեղ. զոր օրինակ
վերը ըսած երկակ մարմնոց բաղկացու-
թեան անունն կ'ըլլայ, Թեո-աթի-թա-
որ ծարրոյ՝, Թեո-աթի-թա-որ սնդիկ՝:

Իսկ երբ մի և նոյն մետաղատիպ
մարմնոց հետ զատ զատ մետաղ մարմին-
ներ միացած ըլլան, և անոնց իրարու
հետ բաղկացութիւնը հարկ ըլլայ ցու-
ցընել, ան ատեն նախ մետաղատիպ մար-
մինը կամ մերժական տարրը կը դրուի
իբրեւ սեռական անուն՝ սկիզբը գնելով
կիւն, և՛. յետոյ կը դրուին մետաղ մար-
մնոց անունները իրենց ելեքտրութեան
կարգով՝ իբրեւ դրական տարր կամ տե-
սակարար անուն. զոր օրինակ Նարոյ
ծծմբաւորին և Պոսասիոնի ծծմբաւո-
րին բաղկացութիւնը՝ կ'ըսուին Կիւն
ծծմբա-որ ծարրոյ և պոսասիոնի՝:

Ետադական թթուիկներուն շա-
տին մէկտեղ միաւորելէն առաջ եկած
բաղկացութիւններն ամենեւին անուա-
նակոչութիւն չունին. անոր համար սո-
վորական անուններով կը կոչուին ապա-
նի, Գրահոփիւն, սո-ա Գոհոր, և այլն:

Իսկ բուսական և կենդանական նիւ-
թոց տարերքն են թթուածինը, ջրա-
ծինը, բնածուխն ու մահածինը. որով
այսչափ տէսակ տարերաց բաղկացած
ըլլանուն, և այն համեմատական զու-
գաչափերն իրենց մէջ չգտուելուն՝ ինչ
որ անգործարան արարածոց մէջ կը հիա-
նանք, ուստի իրենց անվրէպ անուանա-
կոչութիւնն ալ սահմանելը անկարելի
է. անոր համար անոնք իրենց հին ա-
նուններովն դեռ կը կոչուին Կոյլ, Գոյախ,
շաթը, խեթ, ա-իչ, աբիւն, Բո, ևն.
բաց ի քանի մը նիւթերէ, որոնց բաղ-

կացութիւնն ու յատկութիւններն ու-
րոշ իմացուած ըլլալով՝ հանքային նիւ-
թոց պէս անուանակոչութիւն ունեցե-
ր են, առանց անոնց ճշգրութիւնն ունենա-
լու. զոր օրինակ Գոյախի Բեո-՝, Լե-
դախի Բեո-՝, և այլն:

Հոս ահա կը լրմննայ բնալուծական
անուանակոչութեան ամբողջ ու լիակա-
տար բացատրութիւնը. որուն մէջ ջրա-
նայինք բնալուծութեան վերաբերեալ
ամէն մարմնոց վրայօք ճիշդ ու սրոշ տե-
ղեկութիւն մը տալ, որով երկու գլխա-
ւոր օգուտ եղած կը համարինք. Եւ մը
ուսումնական լեզուներնուս մէջ առ սա-
կան իրեք հազար բառ աւելցաւ, որով
հետեւ բնալուծական անուանակոչութիւն
չինուած բառերն ասկէց պակաս չեն, և
այնպիսի բառեր՝ որ ճիշդ ու անփոփոխ
նշանակութիւն մը ունին, և ոչ թէ ան-
որոշ ու տարտամ. Եւ որովհետեւ բնա-
լուծութիւն անքակտելի կապ մը ունի հան-
քաբանութեան հետ, անով նոյնչափ բառ ալ
ան ուսման վրայ աւելցած սեպեւնիս ան-
տեղի բան մը չսեպուիր: Եւ յիրաւի
թէպէտ և մեր ինչուան հիմա խօսածին
մէջ 40 կամ 50 բառ միայն գտնուի,
բայց որովհետեւ մնացած ամէն բնալու-
ծական բառերն ալ նոյն կանոններով
կը շինուին, անոր համար անոնք ամէն
ալ շինուած կը սեպուին. զոր օրինակ
թթուներու վրայ խօսելով օրինակի հա-
մար միայն մէջ բերինք քլորէ ձևացած
թթուները, բայց երբ մտածենք որ ար-
դի բնալուծութեան մէջ 50էն աւելի
թթու ճանչցուած է, և թէ անոնց ա-
նունն ու սաստկութեան ու տկարութեան
աստիճանները նոյն ածանցներով կը շի-
նուին, հարիւրաւոր բառ միայն թը-
թուներու դասէն վաստկած կ'ըլլանք:
Եւ որ աւելի մեծ է, կանոնը ստոյգ և
անշարժ ըլլալուն՝ ետքէն գտուելի աս-
տիճաններուն անուն տալու համար ալ
նոր աշխատանք մը պէտք չէ, հապա մի
և նոյն մասնիկներով ածանցելու է ի-

1 Գ. Օxysulfure d'antimoine.

2 Դ. Oxychlorure de mercure.

3 Գ. Sulfure double d'antimoine et de po-
tassium.

1 Գ. Acide acétique.

2 Գ. Acide indilique.

րենց ներքին բաղկացութեւն համեմատ, ինչպէս որ քանի մը տեղ յիշեցինք ա. նանկ բաղկացեալներու համար՝ որ դեռ գտուած չեն, բայց եթէ գտուին՝ այսպէս և այնպէս պիտի կոչուին:

Իսկէց կը հետեւի երկրորդ օգուտն ալ, որն որ մեր երկայն խօսակցութեան սկիզբը յիշեր էինք, քի թէ՝ « Երայն ա. նուանակոչուե՞ օրէնքը որոշ գիտնալով մարդ՝ մէկէն շատ մը նիւթոց վրայ ճիշդ գաղափար կ'ունենայ, և անոնց յատկութիւնները կը ճանչնայ », և թէ արդի անուանակոչութիւնը ան աստիճան կա տարելութեան հասած է՝ որ մարմնոց անունէն կ'իմացուի: Ինոնց գոյութիւնը, բաղկացու տարերքը, անոնց չափը և յատկութիւնները, զոր օրինակ Վերաբարձար Ֆալարճար պոպասի ըսելով կ'իմանանք մէկ աղ մը, որուն բաղկացու տարերքն են քլորը, թթուածինն ու պոտասիոնը. նախ քլորը միացեալ է իր 1 զուգաչափով՝ թթուածնի 7 զուգաչափին հետ, որով եղած է իրմով ձևացած թթուներուն ամենէն զօրաւորը՝ որ է Երաբարային ըսուած թթուն. և որովհետեւ գիտենք թէ

քլորին զուգաչափն է 443,2

և թթուածնինը 100

ուրեմն 7×100 ըլլալով 700,0

աս թթուն զուգաչափն ալ

կ'ըլլայ 1143,2

և իրեն տարազը կ'իմացանա՞նք որով ամբողջ բաղկացուին ալ կ'իմացուի՝ կ'ըլլայ այսպէս Գ. Թ.՝ — Իսկ նոյն աղին արմատը որ է պոտասը բաղկացեալ է պոտասիոնի 1 զուգաչափով և թթ. թուածնի 1 զուգաչափով՝ որով եղած է պոտասիոնի առջի աստիճանի թթուիկ մը՝ որ է Երաբարային պոտասիոնի ըսուածը. ասոնց ալ բաղկացութիւնը արդէն գիտենք. վասն զի

պոտասիոնի զուգաչափն է . . . 490,0

թթուածնինը 100,0

ուրեմն աս արմատին զուգաչափն

ալ կ'ըլլայ 590,0

Իսկ իրեն տարազը կամ համառօտագրութիւնը Գ. Թ.՝

Իսկ աս երկու մարմնոց բաղկացու-

թենէ ձևացած է վերի աղը: Բայց ան անուամբ կ'իմացուի նաև աս երկուքին իրարու ունեցած համեմատական չափը վասն զի Ֆալարճար ըսելով կ'իմացուի ա. նանկ աղ մը որուն թթուիկը թթուն համեմատութեամբ մէկուկէս անգամ աւելի է, որով ան աղը աւելի թթուիկի զօրութիւն և յատկութիւն ունի քան թէ թթուի. ինչպէս կը ցուցնէ նաև իրեն տարազը որ է այս

3 Գ. Թ. . 2 Գ. Թ.՝:

Բաց ասոնցմէ՝ նոյն անուամբ և տարազով կ'իմացուի մի և նոյն աղին տարերայ ելեքտրական վիճակը, անոնց վոլթայեան մարտկոցին հետ ունեցած վերաբերութիւնը և ուրիշ մարմնոց հետ բաղադրուած ժամանակ անոնց վրայ ունեցած զօրութիւնը: Երջայէս բնալուծական անուանակոչութեւն ճիշդ շինուած մէկ բառը անանկ որոշ, յայտնի ու ընդարձակ տեղեկութիւն կու տայ մարմնոց, որ էջեր լեցնելու նիւթ կ'ըլլար՝ թէ որ ուղէինք զանոնք պարզ գրուածքով բացատրել:

Նոս տեղս վերջ կու տանք աս նիւթիս վրայօք ինչուան հիմա զուրցած. ներնուս, սպասելով իմաստնոց և աս գիտունս վրայ տեղեկութիւն ունողաց դատաստանը լսելով մեր բռնած ոճին վրայօք. յիշեցնելով ան խօսքը որ Երաբարային և Գոլթրուա բնալուծական անուանակոչութիւնը սակմանելու ատեն՝ իրենց ժամանակին համար ըսին. « Նիւթ է՝ ի մտաց մերոց կարծել՝ եթէ լիով ամենայնիւ տեղեկաբ իցեմք մասանց դիտութեւս, և համարիմք զի անուանադրութիւնս այս թէ և ամենայն խնամովք յօրինեալ իցէ, այլ յանթերի կատարելութեւնէն վերջացեալ գտանիցի՝ ի բարգաւաճել և ևս բնալուծական մակացութեանց »:

Հ. Օ. ԳՈՒՐԳ.